հանցագործության մեծագույն խրախուսանքն է»:

Այս դրվագում հեղինակն անդրադարձել է 1918-1920թթ. Արևելահայաստանում և Ղարաբաղում տիրող իրավիճակին, Ադրբեջանի մուսաֆաթական կառավարության հայաջինջ քաղաքականությանը, որին նպաստում էին անգլիական զինյալ ուժերը: Դա իրոք Թուրքիայի 1915-ի հայաջինջ քաղաքականության կրկնությունն էր: Հ.Ինճիկյանը նկարագրել է դեպքերի ընթացքը, անդրադառնալով 1917-ի դեպտեմբերի 5-ի ռուս-թուրքական նահանջին, թուրքական բանակի արշավանքներին, Բրեստ-լիտովսկու պայմանագրին և այլն:

Միակ պետությունը, որ կարող էր գործել ի նպաստ հայաստանի, Ռուսաստանն էր: Սակայն, ինչպես ակնարկում է հեղինակը, - «հանրապետության ղեկավարների շրջանում միասնություն չի եղել այդ հարցերը լուծելիս, ուստի Չիչերինի, Կարախանի, Լեգրանի ջանքերը՝ ի նպաստ Հայաստանի, անցել են ապարդյուն»:

Հեղինակը գտնում է, որ անպատժելիությունն էր, որ հնարավոր դարձրեց մերօրյա հայկական կոտորածները Սումգայիթում, Գանձակում, Բաքվում՝ բոլոր այն եղանակներով, որպիսիք գործադրեցին երիտթուրքերը 1915-ին:

Մ.Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հայոց 1915-16 թվականների ցեղասպանությունը հայ պատմագրության մեջ (Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման սեղմագիր) Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ., 1996

Սույն ուսումնասիրության հեղինակը հանրագումարի է բերել հայոց մեծ եղեռնի պատմության բնագավառում հայ պատմագրության մեջ մինչև այժմ կատարված մեծածավալ ու շնորհակալ աշխատանքը, համակողմանիորեն պատմաքննական վերլուծության ենթարկել ցեղասպանությանը նվիրված աշխատությունները, գիտական արժեք ներկայացնող հուշագրություններն ու հրապարակումները:

Ատենախոսությունը, որ Հայոց ցեղասպանության հայ պատմագրության պատմաքննական տեսությունը գիտականորեն ներկայացնելու առաջին փորձն է, ունի գիտա-ճանաչողական արժեք և օգտակար կարող է լինել փորձագիտական ճշմարիտ եզրահանգումների համար: Գոյություն ունեցող իրարամերժ տեսակետների համադրմամբ ու քննարկմամբ հեղինակը պարզաբանումներ է կատարել ոճրագործության իրական պատճառների բացահայտման, Մեծ տերությունների դիրքորոշման, եղեռնի զոհերի թվաքանակի որոշման հարցերում: Ատենախոսը որոշակի պատասխան է տալիս այն հարցին, թե որո՞նք էին թուրքական բարբարոսությանը առավել ընդդիմուն ու կազմակերպված, համայնական բնույթի հակահարված չտալու հիմնապատճառները և ովքե՞ր էին այդ ձախողանքի իրական պատասխանատուները:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից՝ ութ ենթագլուխներով:

Առաջին՝ «Մեծ եղեռնի պատմության սկզբնավորումը» գլուխը բովանդակում է ականատես-ժամանակակիցների ուսումնասիրությունների, հուշագրությունների և օտար հեղինակների հայերեն թարգմանված աշխատությունների վերլուծությունը: Հեղինակը բարձր է գնահատում Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Մուշեղ Արքեպիսկոպոսի, Եղիշե քահանա Տեր-Պարսամյանի, Արամ Անտոնյանի, Նազարեթ Փիրանյանի, Գաբրիել Թագավորյանի, Լևոն Մոգյանի, Հովհ. արք. Անգլյանի, Գրիգոր Պողոյանի, Մելքոն Տեր-Մելքոնյանի, Մ.Էսմերյանի, Ղազար Մակունցի աշխատությունների ու աղետից վերապրած մի շարք հեղինակների հուշագրությունների փաստավավերագրական արժեքը:

Երկրորդ՝ «Օտար հեղինակների հայերեն թարգմանված աշխատությունները» գլուխը նվիրված է այլազգի հեղինակների աշխատությունների վերլուծությանը:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում արևմտահայության ճակատագրի մասին գրել են ռուս և օտար շատ հեղինակներ՝ Վալերի Բրյուսովը, Անդրեյ Մանդելշտամը, Հենրի Մորգենթաուն, Ջեմյս Բրայսը, Հերբերտ Ադամս Գիբսոնը, Հենրի Ֆիրբյուխերը, Ֆրիտյոֆ Նանսենը, Հանրի Բարբին, Ֆայես էլ Ղոսեյնը, Մևլան Զադե Ռիֆաթը և ուրիշներ, որոնց աշխատությունները որոշակիորեն նպաստել են ամբողջացնելու հայ պատմագրության ընդհանուր պատկերը: Ատենախոսը կարևորում է ֆրանսիացի պատմաբան և հրապարակախոս Ռենե Պիոնի «Հայերի բնաջնջումը» գրքույկը, աստվածաբանու-

թյան դոկտոր Յոհաննես Լեփսիուսի կազմած գաղտնի տեղեկագիրը, դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսոնի վկայությունները, լեհ հասարակական-քաղաքական գործիչ, արևելագետ և լրագրող Բոգդան Գեմբարսկու «Նամակներ աշխարհին» գիրքը և այլն:

Երկրորդ՝ «Հայոց մեծ եղեռնը սփյուռքահայ պատմագրության մեջ» գլխում հեղինակը պատմաքննական վերլուծության է ենթարկել սփյուռքում հրատարակված աշխատությունները:

Առաջին ենթագլխում հեղինակը անդրադարձել է Կարո Սասունու, Թեոդիկի (Թադևոս Լապճինյանի), Հայկ Աճեմյանի, Սեպուհ Ակունու, Գրիգորիս ծ. Վարդապետ Պալաքյանի, Հայկ Կոսոյանի, Հ. Թյուրապյանի, Գաբրիել Լազյանի, Տիգրան Անդրեասյանի, Ռուբենի, Զավեն Արքեպիսկոպոսի աշխատություններին, որոնք հիմք դարձան Հայոց եղեռնի պատմագրական հետագա փուլի սկզբնավորման համար:

Երկրորդ ենթագլխում քննության են առնված 1965-1995 թվականներին սփյուռքում հրատարակված աշխատությունները: Սփյուռքահայության և առհասարակ ողջ հայ ժողովրդի կյանքում բացառիկ իրադարձություն էր Մեծ եղեռնի 50-ամյակը: Բազմապիսի սգահանդեսներին և այլ միջոցառումներին զուգահեռ, այդ առիթով հրատարակվեցին հուշամատյաններ, պարբերականների բացառիկներ և պատմագիտական աշխատություններ, որոնցում եղեռնի պատմության ուսումնասիրումը բարձրացվեց նոր աստիճանի:

Եղեռնի 50-ամյակի առիթով հրատարկությունների առաջնեկն ու չգերազանցվածը ՌԱԿ-ի «Զարթոնք» օրաթերթի խմբագրապետ Գերսամ Սահարոնյանի և խմբագիր Նազարեթ Թուխսզյանի հրատարակած շքեղ և մեծադիր «Հուշամատյան Մեծ եղեռնի» հատորն է:

Երրորդ՝ «1915և1916 թվականների ցեղասպանությունը հայրենական պատմագրության մեջ» գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից և նվիրված է խորհրդահայ պատմագրությանը:

Հայոց եղեռնի պատմությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո տասնամյակներ շարունակ մատնվեց միտումնավոր լռության, արգելվեց խոսել և գրել, որովհետև այդպես էին պահանջում գերապետության արտաքին քաղաքականության ու բոլորին պարտադրված գաղափարախոսության շահերը:

Ինչպես հեղինակն է նշում՝ պատմագիտության բնագավառում ավերիչ դեր կատարեց վուլգար սոցիոլոգիզմը, որի պարտադրանքով էլ մեր ժողովրդի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ հրապա-

ատակ նետվեցին հակագիտական ու արտառոց կոնցեպցիաներ: Վուլ-
գար սոցիոլոգիզմի անմիջական ազդեցության արդյունք պետք է համա-
ոեել անշուշտ, որ բազմավաստակ պատմաբան Լեոն (Առաքել Բաբա-
ենանյանը), ի ժխտումն նախկինում իր իսկ մշակած միանգամայն
ուառողջ ու գիտական մոտեցումների, ծայրահեղ տեսակետներ արտա-
ոայտեց հայ ազատագրական շարժման, նրա գործիչների և, մասնավո-
ոապես, արևմտահայության ողբերգության մասին: Նա Հայոց ցեղա-
սպանության գլխավոր մեղավորներ հռչակեց հենց իրենց հայերին,
ոհանիրավի դատապարտեց կամավորական շարժումն ու 1915 թվակա-
նի ինքնապաշտպանական հերոսամարտերը:

Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրու-
թյան բնագավառում մեծ ավանդ է ներդրել բազմավաստակ հայա-
գետ-պատմաբան, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը: Նա հայտնաբե-
րել և «Պատմաբանասիրական հանդեսի» 1965 թ. առաջին համարում,
«Նյութեր հայկական կոտորածների մասին» խորագրով հրապարկել է
ինն արժեքավոր փաստաթղթեր, որոնք լույս են սփռում մի շարք հան-
գուցային հարցերի վրա: Ըստ հեղինակի, Մ.Ներսիսյանի 1982-ին հրա-
տարակած «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում»
փաստաթղթերի և նյութերի ժողովածուն մերկացնում է ժամանակից
թուրք կեղծարարներին, որոնք ճգնում են ժխտել օսմանյան Թուրքիա-
յում հայերի ցեղասպանության փաստը:

Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության վերաբերյալ
նոր փաստաթղթերի ու նյութերի հայտնաբերման, գիտական մշակման
և հրատարակման բնագավառում լուրջ ներդրում են կատարել Վարդգես
Միքայելյանը, Ստ. Ստեփանյանը, Ե. Սարգսյանը, Ա. Մնացականյանը,
Ջոն Կիրակոսյանը, Մ. Արզումանյանը, Գ. Գալոյանը, Գևորգ Ղարիբջան-
յանը, Հ. Ինճիկյանը, Ստ. Պողոսյանը, Ռուբեն Սահակյանը:

Երկրորդ «Ցեղասպանության ուսումնասիրումը» ենթագլուխը
նվիրված է 1960-ական թվականներին և դրանից հետո հրատարակված
աշխատություններին: Ըստ հեղինակի, այդ շարքի առաջնեկներից են
պրոֆեսորներ Ե. Սարգսյանը, Ար. Մնացականյանը, Ջոն Կիրակոսյանը,
Մ. Արզումանյանը, Ստ. Ստեփանյանը, Ստ.Պողոսյանը, ակադեմիկոսներ
Գևորգ Ղարիբջանյանը, Ծատուր Աղայանը, Գալուստ Գալոյանը, Հրա-
չիկ Սիմոնյանը:

Հեղինակը գտնում է, որ ցեղասպանության պատմական ակունքնե-
րի բացահայտման ինքնատիպ մոտեցում է մշակել ակադեմիկոս Լենդ-

ռուշ Խուրշուդյանը, ըստ որի՝ նվաճելով Հայկական լեռնաշխարհը, թուրքերն ի սկզբանե վարեցին Հայաստանը հայաթափելու, հայոց պատմական հայրենիքը սեփականացնելու քաղաքականություն, որը հետագայում ստացավ պետական ծրագրի տեսք: Ծնունդ առավ օսմանյան կայսրությունում ազգային հարցը և, առաջին հերթին, Հայկական հարցը եղեռնի միջոցով լուծելու կոնցեպցիան:

Երրորդ՝ «Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի ուսումնասիրումն ու գնահատումը» ենթագլուխը նվիրված է հայոց հերոսամարտի լուսաբանման հարցերին:

Ինչպես հեղինակն է ընդգծում, հայրենական պատմագրությունը վճռականորեն մերկացնելով Արևմտյան Հայաստանում հակաթուրքական շարժման առկայության վերաբերյալ թուրքական հերյուրանքը, մշակել և ամրատավորել է հարցի լուսաբանման գիտականորեն հիմնավորված մեկնակետ, համաձայն որի արևմտահայության հերոսամարտերը երիտթուրքական ավազակաբարո վարչակարգի ծրագրած աննախադեպ ցեղասպանության քաղաքականության անմիջական հետևանք էին, որոնք ունեին բացառապես ինքնապաշտպանական բնույթ և միանգամայն օրինաչափ էին, պարտադրված ու անհրաժեշտ:

Չորրորդ՝ «Ցեղասպանության պատմագրության հետազոտությունը» ենթագլխում ներկայացված է հիմնահարցի պատմագրության ուսումնասիրման պատկերը:

Ըստ հեղինակի՝ հայրենական մի շարք պատմաբաններ իրենց աշխատությունների ներածականում կամ բուն շարադրանքում այս կամ այն չափով անդրադառնել են հարցին, սակայն առանձին հետազոտության առարկա չեն դարձել: Այդ առումով պատմագրական հատուկ հետազոտություն է Ե.Սարգսյանի և Ռ.Սահակյանի համատեղ «Հայ ժողովրդի նոր դարաշրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» աշխատությունը, ուր մերկացվում են թուրք հեղինակների կեղծարարությունները Հայոց ցեղասպանության հարցերում:

Հինգերորդ գլուխը նվիրված է Մեծ եղեռնի պատմագրության հարցերին, որտեղ հեղինակը քննարկում է ֆրանսիական պատմաբաններ Իվ Թերնոնի, ժան-Մարի Գառզուի, Արթուր Բեյլերյանի, Պիեռ Մոզերի, անգլիական պատմաբաններ Ք.Ուոքերի, Դ.Լանգի և այլոց աշխատությունները: Առանձին գլխում տրված է թուրք պատմագրության կեղծարարության քննադատությունը: